

նը ծուխ երևաց ընտրողական թերթիկներն այրելուց: Մերանա-
 ռորներն օրական երկու նիստ են ունենում՝ ճաշից առաջ և
 յետոյ: Ամէն նիստը տեւում է երկու ժամ: Պատը ընտրուեց վե-
 նեակի պատրիարք կարգինսպ Սարգօ, որ ընդունեց Պիոս X
 անունը:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ.

Օրհնութիւն սրբալոյս Միւռոնի. Վեհափառ Հայրա-
 պետը բարեհաճեց անօրինելոյ որ սրբալոյս իւրի օրհնութիւ-
 նը կատարուի Սղոսատոսի 24-ին՝ փոխանակ Սեպտեմբերի 28-ին,
 ինչպէս որ նախապէս կարգատրուած և յայտարարուած էր:

Ժամանակի փոփոխութիւնը անակնկալ էր: Հրաշափառ
 հանդէսը սկսուեց և կատարուեց ի ներկայութեան 14 արք-
 եպիսկոպոսների, եպիսկոպոսների և բազմութիւ վարդապետ-
 ների. հաւաքուեց ուխտաւորների մեծ բազմութիւն: Հան-
 դիսի նախորդ երեկոյեանս որ էր կերակնամուտայ տեղի ունե-
 ցաւ գիշերային հսկումս իսկ միւս օրը ս. պատարագին՝ սըր-
 քալոյս իւրի օրհնութիւնը: Պատարագին էր Տ. Արիստակէս
 արքեպիսկոպոս Սեդրակեանը, իսկ հանդիսադիրը՝ ազգիս
 Վեհափառ Հայրապետը: Ս. Պատարագն արդէն սկսուած էր
 երբ Նորին Ս. Սծութիւնը զգեստաւորուած հանդիսաւոր
 կերպով տաճար իջաւ՝ իւր շուրջն ունենալով տասներկու
 եպիսկոպոս, որոնք նոյնպէս զգեստաւորուած էին օրուայ
 հանդիսին վայել շքեղութեամբ, շուրջառազգեստ վարդապետ-
 ներ և ուխտաւոր քահանաներ:

Ս. Պատարագի մատուցումը ընդհատուեց Ոգջոյն-ից ա-
 ռաջ և սրբազանագոյն Հայրապետը գլուխ անցած եպիսկո-
 պոսաց դասին սկսեց ս. Միւռոնի օրհնութեան ահեղ խոր-
 հուրգը: Հայրապետը աջ ձեռում բռնած ունէր կենաց փայ-

տի ս. խաչը, Մեսրոպ արքեպիսկոպոսը ս. Գեղարդը, Սուքեաս արքեպիսկոպոսը ս. Լուսաւորչի աջը, Գէորգ արքեպիսկոպոսը Մծբնայ Յակոբ Հայրապետի ս. աջը, Արիստակէս արքեպիսկոպոսը Թաղէոս առաքելի աջը, Գրիգորիս եպիսկոպոսը Բարդուղիմէոս առաքելոյ աջը, Մակար եպիսկոպոսը Արիստակէս Հայրապետի ս. աջը, Անանիա եպիսկոպոսը Մատթէոս Աւետարանչի ս. աջը, Յովհաննէս եպիսկոպոսը Անդրէաս առաքելոյ ս. աջը, Բարդուղիմէոս եպիսկոպոսը ս. Լուսաւորչի հին միւռոնը, Յուսիկ եպիսկոպոսը ծաղկանց նիւթ, Գարեգին եպիսկոպոսը ս. Աւետարան, Սարգիս եպիսկոպոսը Պալասանի անուշահոտ իւղ:

Նախ արքեպիսկոպոսները կարգաւ կարգացին նշանակուած դրբերը և Աւետարանը, ապա Վ.Ե.Տ. Հայրապետը կարգաց Մեծ Աղօթքը, վերջացնելով հրամայեց եպիսկոպոսներին շարունակել աղօթքներ կարդալ: Վերջին աղօթքը կարգաց Նորին Սրբութիւնը, ապա Աւագ Լուսարարը վերցրեց ս. Միւռոնի կաթսայի կափարիչը և սկսուեց Տեառնազրութիւն: «Առաքելոյ Աղաւնոյ» շարական երգելիս Վ.Ե.Տ.առ Հայրապետը իւր ձեռքով նախ ածեց հին Միւռոնը նոր իւղի մէջ, ապա լցրեց Պալասանի իւղը և հետը խառնեց ծաղկանց նիւթը: Յետոյ վերցնելով Կենաց փայտի խաչը նախ նորանով տեառնագրեց ս. Միւռոնի իւղը, երկրորդ տեառնազրութեան խառնեց ս. Գեղարդով, երրորդ տեառնազրութեան ս. Լուսաւորչի աջով, Օրհնութիւնից յետոյ կաթսան կափարիչով ծածկեցին և Վ.Ե.Տ. Հայրապետը մօտ դալով նստեց աթոռի վրայ և շարունակեց մնացած աղօթքները մինչև վերջը: Ապա պահպանիչով վերջացնելով արարողութիւնը եպիսկոպոսաց հետ միասին «ողջոյն»ին համբուրելով կաթսան իջաւ խորան և զգեստները հանելով դնաց Վ.Ե.Տ.արան հանգստանալու և պատարագը շարունակուեց:

Հանդէսը վերջանալուց յետոյ խոնած բաղմութիւնը շրջապատեց և հանդիսով դէպի Վ.Ե.Տ.արան առաջնորդեց Վ.Ե.Տ.առ Հայրապետին: Ս. Միւռոնօրհնութեան հանդէսը խորը տպաւորութիւն թողեց ուխտաւորներին վրայ, շատերը զգացուած արտասուում էին: Կաթսայի համբուրելը

աւելի կարգով կատարուեց, որովհետեւ ժողովուրդը իրան շատ
լաւ էր պահում:

Վեհափառ Հայրապետի հրաւերով Մայր Աթոռ ժամա-
նեցին Երեւանի փոխանորդը, Աստրախանի, Վրաստանի և Ի-
մերեթի, Ղարաբաղի, Շամախոյ և Բեսարաբիոյ վիճակային
առաջնորդները, Կարսի, Աղէքսանդրապոլի, Ախալցխայի,
Ղազարի, Նուխույ, Հին-Նախիջևանի, Նոր-Նախիջևանի փո-
խանորդները, Սանահինի, Սեանի, Մոզնու Տաթևի վանահայ-
րերը, որոնք մի սուժամանակ այտեղ մնալուց յետոյ վերա-
դարձան իրենց պաշտօնատեղին:

Միւսոնորհնութեան ս. հանդիսին ուխտաւորներ եկել
էին միայն ամենամօտիկ գիւղերից, իսկ հեռաւորները հեռա-
գիրներով և մասնաւոր գրութիւններով ուղղուած յանուն
Վեհափառ Հայրապետի շնորհաւորում էին եկեղեցական այդ
մեծ հանդիսի կատարումը: Մինչև այժմ Միւսոնի կաթսան
բաց բաղմեցրած է Յովհաննու Մկրտչի սեղանի վրայ և ժա-
մանակ ժամանակ հեռու քաղաքներից ուխտաւորներ են գալիս
համբուրելու:

Ս. Էջմիածին եկող բոլոր առաջնորդները, յաջորդները
և վանահայրերը արդէն վերադարձել են իրենց պաշտօնա-
տեղերը. Մոզնու ս. Գէորգ վանքի վանահայրական թափուր
մնացած պաշտօնը յանձնուեց Վահան վարդապետին: Տ. Մես-
րոպ արքեպիսկոպոսը վանահայր նշանակուեց Երնջակու ս. Կա-
րապետ վանքին: Ատրպատականի առաջնորդ Եղիշէ ծ. վար-
դապետը եկաւ Էջմիածին, նրա հետ Սալամաստի յաջորդ
Ընձակ վարդապետը, որը վանահայրական պաշտօնով գնաց
Սաղիանու ս. Ստեփաննոսի վանքը:

Մայր Աթոռ վերադարձան՝ Մոսկուայից Զաւէն վարդա-
պետը և Գերմանիայից միարան Մկրտիչ Ղազարեանը, որ

Ստրասբուրգի համալսարանում ներկայացնելով «Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches— Հայերը արաբական իշխանութեան ներքոյ մինչև Բագրատունեաց հարստութեան հիմնադրութիւնը» շարադրութիւնը արժանացել է փիլիսոփայութեան դոկտորի տիտղոսի: Այդ աշխատութիւնը արդէն տպագրուել է «Հանգէս Հայագիտութեան» մասնագիտական թերթի մէջ:

Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանում դասերը սկսուեցին Սեպտեմբերի 16 ին, իսկ Սեպտեմբերի մէկից կատարուեց հին աշակերտների վերաքննութիւնը և նորեկների ընդունելութիւնը: Ամեն տարուայ պէս ձեմարան մտնել ցանկացողների թիւը շատ մեծ էր և վարչութիւնը ի նկատի ունենալով դասարանների և ննջարանի փոքրութիւնը, ստիպուած մերժեց շատերին: Այնուամենայնիւ բոլոր աշակերտների թիւը հասնում է 240, որոնցից երթեկեկ են միայն 20 հոգի:

ձեմարանի ուսուցչական կազմի մէջ աւելացան պ. Ս. Տիգրանեան՝ մասնագիտական բաժնում իմաստասիրական առարկաների ուսուցիչ և Տ. Մամբրէ վարդ. դպրոցական բաժնի Գ. և Ե. դասարանների կրօնուսոյց:

Մասեճաղարանի և Թանգարանի անունով ստացուած նուէրներ

Տ. Այս տարուայ Մայիս ամսին դործով Բագու գանուած Ժամանակ, հանդուցեալ Աստուածատուր Կաճկաճեանի այրին ղիմեց մեզ և յայտնեց, որ մտադիր է իւր ամուսնու փոքրեկ գրադարանը, հանդուցեալի նկարի հետ նուիրել Մայր Աթոսի Մատենադարանին և երկու ամիս անց կատարեց իւր խոստումը, երկու արկղի մէջ մեզ ուղարկելով յեշեալ գրքերը: Մինչև օրս, դժբախտաբար, չենք կարողացել ցուցակագրել այդ գրքերը, ուստի